Global Gateway
Resilient Syunik
Team Europe Initiative

European Investment Bank

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Polish aid

Fundacja Court Watch Polska

Երիտասարդների զորավորում դատական մշտադիտարկման և իրավական կրթության միջոցով. առաջընթաց մարդու իրավունքների, արդար դատավարության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում Հայաստանում՝ հատուկ ուշադրության կենտրոնում՝ Սյունիքի մարզը

ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2024 թ.

1. Գործադիր ամփոփում

Սույն զեկույցը ներկայացնում **է «Դատական մշտադիտարկում և ակտիվ քաղաքացիության ձևավորմանն ուղղված իրավական իրազեկում Սյունիքի մարզում»** ծրագրի ընթացքն ու արդյունքները: Այն իրականացվել է 2024 թ.-ի մայիս-նոյեմբեր ամիսներին «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ Լեհաստանի «Համերաշխություն» հիմնադրամի հետ համագործակցությամբ և Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության զարգացման համագործակցության աջակցությամբ:

Հիմնադրումից ի վեր (1997 թ.) «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ նաև կազմակերպություն) իր գործունեությամբ Հայաստանի Հանրապետությունում մշտապես եղել է մարդու իրավունքների և արդար դատավարության հաստատակամ ջատագովը՝ իրականացնելով բազմաբնույթ ծրագրեր և նախաձեռնելով տարբեր գործողություններ, որոնք մասնավորապես ուղղված են Հայաստանի իրավական-դատական համակարգում թափանցիկության և հաշվետվողականության խթանմանը, ժողովրդավարական գործընթացների ամրապնդմանը և հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը:

Այս նախաձեռնությունները մշտապես առաջնահերթություն են տվել երիտասարդների ներգրավվածությանը դատական մշտադիտարկման և մարդու իրավունքների ջատագովման գործում: Ներկայիս ծրագիրը հարստացնում է այս ժառանգությունը՝ ներգրավելով Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերի և Երևան քաղաքի երիտասարդներին և ամրապնդելով «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան ՀԿ-ի՝ երիտասարդներին հզորացնելու և ակտիվ քաղաքացիական ներգրավվածությունը խթանելու հանձնառությունը:

Վերջին չորս տարիների ընթացքում կազմակերպությունը հանդես է գալիս երիտասարդների համար դատական մշտադիտարկման շարունակական նախաձեռնությամբ՝ համագործակցելով Լեհաստանի Հանրապետության «Համերաշխություն» հիմնադրամի (SFPL) հետ: Թեև այս նախաձեռնությունը նախորդ տարիներին կյանքի է կոչվել տարբեր ծրագրերի անվանումների ներքո, այն շարունակում է մնալ երկարաժամկետ և շարունակական գործունեություն, որը զորավորում է երիտասարդներին դառնալու իրենց համայնքների իրավական գործընթացների ակտիվ մասնակիցները:

Տարեցտարի նախաձեռնությունն ընդլայնել է իր շրջանակը՝ ներգրավելով ավելի շատ երիտասարդ մասնակիցների, խորացնելով նրանց պատկերացումները մարդու իրավունքների, արդար դատավարության և հակակոռուպցիոն ջանքերի մասին և նրանց զինելով դատական մշտադիտարկման գործունեությանը մասնակցելու համար անհրաժեշտ հմտություններով: Այս նախաձեռնության երկարաժամկետ բնույթը կազմակերպությանը թույլ է տվել ամուր հիմքեր ստեղծել մշտադիտարկման մշակույթի, իրավական կրթության և քաղաքացիական ներգրավվածության խրախուսման համար, հատկապես այնպիսի մարզերում, ինչպիսին

Սյունիքն է: Այս կայուն ջանքերի շնորհիվ այն նպաստել է ՀՀ-ում ավելի թափանցիկ, հաշվետու և իրավունքները հարգող դատական համակարգի խրախուսմանը:

Ի թիվս այլ դրամաշնորհատուների, ինչպիսիք են Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հանրային դիվանագիտության բաժինը և ԱՄՆ օգնության և աշխատանքի դեպարտամենտը, թե՝ Լեհաստանի աջակցության կազմակերպությունը, թե՛ «Համերաշխություն» հիմնադրամը կարևոր դեր են խաղացել միջազգային զարգացման, ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակությանը սատարելու գործում գործակցության, ֆինանսական աջակցության և տեղական նախաձեռնությունների միջոցով: Նրանց ներդրումները զգալիորեն աջակցել են ՀՀ-ում սոցիալական կայունության զարգացմանը, կառավարման բարելավմանը, ինչպես նաև մարդու իրավունքների և դատական մշտադիտարկման մշակույթի խրախուսմանն ուղղված ծրագրերին:

Արդեն չորրորդ տարին է, ինչ երիտասարդները հնարավորություն են ունենում մասնակցելու դատական մշտադիտարկմանը «Լեհական օգնություն» կազմակերպության (Polish Aid) աջակցության շրջանակում: Այս տարիների ընթացքում հաշվի են առնվել մի քանի առաջարկություններ, և կատարվել են նախորդ տարիների փորձերի համեմատական վերլուծություններ:

Լեհաստանի Դատական վերահսկողության հիմնադրամի (Court Watch Poland) հետ համագործակցությամբ «Հելսինկյան ասոցիացիա»-ն մշակեց մշտադիտարկման նոր էլեկտրոնային գործիք, որը լավագույնս հարմարեցված է կազմակերպության արդիացված մեթոդաբանություններին: «Համերաշխություն» հիմնադրամի կողմից աջակցվող այս նախաձեռնությունը նպատակ ուներ հեշտացնելու և ընդլայնելու մշտադիտարկման գործունեությունը: «Համերաշխություն» հիմնադրամն առանցքային դեր է խաղացել ծրագրի կազմակերպման և ֆինանսավորման գործում՝ ապահովելով անհրաժեշտ ռեսուրսները, համակարգումը և ռազմավարական վերահսկողությունը՝ լավագույն արդյունքների հասնելու համար: Նրանց համապարփակ աջակցությունն օգնել է դյուրացնելու թվային ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ հնարավորություն տալով կազմակերպությանն իրականացնելու ավելի արդյունավետ դատական մշտադիտարկում: Կազմակերպության թիմն ակտիվ դերակատարում ունեցավ ողջ գործընթացում, որը ներառում էր.

- ✓ համատեքստի և ընթացիկ մշտադիտարկման գործիքների գնահատում,
- ✓ մշտադիտարկողների հավաքագրման (գրանցման)[1] և դատական մշտադիտարկման առցանց[2] ձևերի ստեղծում,
- ✓ կազմակերպության մշտադիտարկման գործընթացներում այս գործիքների ներդրման վերաբերյալ խորհրդատվություն:

[1] https://hahr.am/registration/
[2] https://hahr.am/cmq/

2. Ներածություն

Զեկույցում ներկայացվում է երիտասարդ մշտադիտարկողների՝ դատական մշտադիտարկման առցանց ձևաթղթի միջոցով հավաքած տվյալների մանրամասն վերլուծությունը: Ձևաթուղթը լրացվում է յուրաքանչյուր դռնբաց նիստի դիտորդումից հետո: Ծրագիրը հիմնված է լավագույն պրակտիկայի և անցյալի դասերի վրա՝ ուղղված հատկապես Սյունիքի մարզի կարևոր կարիքներին՝ շեշտը դնելով վերապատրաստումների և նոր գիտելիքների ու հմտությունների գործնական կիրառման միջոցով երիտասարդների զորավորման վրա:

Նախաձեռնությունը մեկնարկեց կարողությունների զարգացման խորացված դասընթացով և ներգրավեց ընդհանուր առմամբ 160 երիտասարդ մասնակիցների, այդ թվում՝ 93-ը Սյունիքից (40-ը Գորիս, 40-ը Կապան և 13-ը Մեղրի («Լոֆթ-Մեղրի» երիտասարդական կենտրոն) քաղաքներից, ինչպես նաև 67 մասնակիցներ Երևանից, Շիրակի և Լոռու մարզերից: Գորիսի 40 մասնակիցներից 12-ը մոտակա գյուղական բնակավայրերից էին՝ 1-ը Խնձորեսկից, 3-ը Ակներից, 3-ը Հալիձորից, 2-ը Հարթաշենից և 3-ը Վերիշենից: Բացի դրանից՝ մասնակիցներից երկուսը Արցախից բռնի տեղահանվածներ էին. մեկը Գորիսից էր, մյուսը՝ Կապանից: Այս երիտասարդներն անցել են կարողությունների զարգացման համապարփակ վերապատրաստում, որն ընդգրկում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մարդու իրավունքների հիմնական հայեցակարգը, արդար դատավարության ընթացակարգերը, հակակոռուպցիոն պրակտիկաներն ու իրավական ոլորտի թափանցիկությունը: Արդյունքում մասնակիցները ոչ միայն ընդլայնեցին իրենց ըմբռնումը, այլև դարձան թափանցիկ և հաշվետու դատական համակարգի ակտիվ ջատագովներ[3]:

Զեկույցը նաև ներկայացնում է Ասոցիացիայի՝ քաղաքացիական ներգրավվածությունը, մարդու իրավունքները, դատարանների թափանցիկությունը և հակակոռուպցիոն միջոցառումները խրախուսելու շարունակական ջանքերը: Ծրագրի հիմնական ազդեցություններից են նաև դատական մշտադիտարկման մեխանիզմի (ԴՄՄ) զարգացումը և դատական համակարգի և իրավապահ մարմինների հետ մարզային մակարդակներում գործակցության ընդլայնումը:

Վերջին շրջանում ծրագրային գործողությունները Սյունիքում, Շիրակում, Լոռիում և Երևանում կարևոր դեր են խաղացել տեղի երիտասարդների, ինչպես նաև ավելի լայն հանրության շրջանում քաղաքացիական ներգրավվածության և դիմակայության զարգացման գործում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Սյունիքին՝ ելնելով մարզի ռազմավարական կարևորությունից և տարածաշրջանի եզակի սոցիալ-քաղաքական

[3] Համաձայն յուրաքանչյուր դասընթացից հետո մասնակիցների շրջանում նախագնահատման և հետգնահատման հարցումների ամփոփագրի՝ բոլոր խմբերում գիտելիքի ընդհանուր միջին աճը գերազանցել է 48%-ը:

մարտահրավերներից: Այս շեշտադրումը նպատակ ուներ խրախուսելու համայնքի ներգրավվածությունը և զորավորելու երիտասարդ անհատներին՝ զարգացնելով տեղական կառավարմանը և դիմակայության ամրապնդմանը նպաստելու նրանց կարողությունները: Կենտրոնանալով Սյունիքի վրա՝ ծրագիրը նպատակ ուներ հասցեագրելու տեղական հատուկ կարիքները, խթանելու կայունությունը և ավելի ակտիվ և տեղեկացված քաղաքացիական հասարակությունը: : Վերապատրաստման դասընթացները, դատական մշտադիտարկումը և դատական ու ոստիկանական համակարգերի հետ փորձի փոխանակման հանդիպումները մասնակիցներին գործնական պատկերացումներ տվեցին իրավական գործընթացների վերաբերյալ: Այս ջանքերը համահունչ են «Հելսինկյան ասոցիացիա»-ի առաքելությանը և նպատակներին:

Երիտասարդները քրեական գործերով դատական նիստերի դիտարկման գործընթացում արժեքավոր փորձ ձեռք բերեցին՝ խորացնելով նրանց պատկերացումները ՀՀ-ում իրավական համակարգի և քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ: Ծրագրում ներգրավված էին 13-ից 25 տարեկան մասնակիցներ: Ներգրավված էին նաև Խնձորեսկ, Ակներ, Հալիձոր, Վերիշեն, Հարթաշեն և այլ գյուղական համայնքերի ավագ դպրոցի աշակերտներ: Մանկավարժների մասնակցությունը ծրագրին (Հասմիկ Մեսրոպյան՝ Կապանից, Արտավազդ Մկրտչյան՝ Գորիսին հարող Հալիձոր համայնքից և Լալա Միրզոյանը՝ Վանաձորից) նպաստեց դասընթացների հեռանկարների քննարկմանը՝ դրանք հարստացնելու գաղափարներ տալով: Որպես կանոն՝ աղջիկների ներգրավվածությունն ավելի մեծ էր:

Թեև ծրագիրը բախվեց մարտահրավերի՝ հնարավորություն չունենալով ընդգրկելու Արցախի Հանրապետության՝ զգալի թվով նախկին քաղաքացիների[4], երկու երիտասարդների մասնակցությունը ցույց տվեց դրա հավատարմությունը ներառականությանը և տարածաշրջանային հակամարտություններից տուժածներին աջակցելուն ՝ դրանով իսկ նպաստելով սոցիալական համախմբվածությանը և ավելի ամուր քաղաքացիական կապերին:

Դատական մշտադիտարկմամբ հետաքրքրված ավելի քան 150 մասնակիցների խանդավառությունն ընդգծում է ծրագրի հաջողությունը երկարաժամկետ քաղաքացիական ներգրավվածության խրախուսման և երիտասարդության զորավորման գործում: Այս նախաձեռնությունը հաջորդում է նախորդ տարում իրականացված մի շարք նպատակային դասընթացների և միջոցառումների, որոնց մասնակցած 31 երիտասարդներ այս տարվա մշտադիտարկողներից են: Սա վկայում է ծրագրի տնական ազդեցության և նախկին մասնակիցների կայուն նվիրվածության ու հետաքրքրվածության մասին:

Ծրագիրն օգնեց նաև բացահայտելու դատական համակարգի թերությունները և արդարադատության մատչելիության վերաբերյալ հանրային ընկալումները՝ լույս սփռելով նրա վրա, թե ինչպես են մարդիկ իրենց զգում դատական նիստերի դահլիճում, և ընդգծելով

[4] Հայաստան – *2023 թվականի իրադարձությունները,* Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքները, Մարդու իրավունքների դիտակ, Երկրի զեկույց 2024 թ., https://www.hrw.org/world-report/2024/country-chapters/armenia

իրավական չափանիշները որոշ չափով հասկանալու կարևորությունը դատական նիստերը մշտադիտարկելուց առաջ:

Այս ներդրումները զգալիորեն առաջ են մղում «Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա» նախաձեռնության նպատակները՝ ընդլայնելով քաղաքացիական մասնակցությունը և ձևավորելով տեղեկացված քաղաքացիություն, որն աջակցում է մարզային կայունությանը և զարգացմանը:

3. Երախտիքի խոսք

Մեր առանձնահատուկ երախտագիտությունն ենք հայտնում **Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը** ներկայացնող **Լեհական աջակցություն** և **Լեհաստանի Համերաշխություն հիմնադրամներին** այս և նախորդ ծրագրերի իրենց երկարաժամկետ և առատաձեռն աջակցության համար:

Մենք մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում Լեհաստանի Դատական վերահսկողության հիմնադրամին անգնահատելի գործընկերության և աջակցության համար, հատկապես առցանց գործիքների մշակմանն աջակցելու համար: Նրանց փորձագիտությունը մեծ դեր է ունեցել դատական մշտադիտարկման ոլորտում մեր նախաձեռնությունների ընդլայնման գործում:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում **ՀՀ Դատական դեպարտամենտին**՝ մասնակիցներին, հատկապես մինչև 16 տարեկաններին տեղի ընդհանուր իրավասության դատարան ազատ մուտքի և դռնբաց նիստեր դիտորդելու հնարավորություն շնորհելու համար: Սա ծրագրի հաջողության շատ կարևոր նախապայման էր:

Շնորհակալ ենք նաև **ՀՀ Սյունիքի մարզպետարանին**, հատկապես Կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ հանձին տիկին Մերի Գանդալյանի, Գորիս, Կապան և Մեղրի քաղաքներում խմբերը աշակերտներով համալրելու հարցում սերտ համագործակցության և այդ քաղաքներում մեր ծավալած գործունեությանը ներգրավվելու համար:

Մենք բարձր ենք գնահատում **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի** ներդրումը՝ հանձին Սյունիքի մարզի ներկայացուցիչ Անի Մնացականյանի, փորձի փոխանակման հանդիպումներին մասնակցելու և երիտասարդների ակտիվությունն ու քաղաքացիական մասնակցություն պահանջող հարցերում ներգրավվածությունը խրախուսելու համար:

Դատավորների հետ փորձի փոխանակման հանդիպումները վճռորոշ դեր խաղացին: Վերջիններս արժեքավոր դիտարկումներ արեցին առանցքային նշանակության գաղափարների վերաբերյալ: Շնորհակալություն ենք հայտնում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ, դատավոր Նապոլեոն Օհանյանին, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար Գարիկ Հովհաննիսյանին, դատավորներ Անահիտ Թումանյանին, Ռոմեն Ահարոնյանին (Կապան) և Ռիմա Առաքելյանին (Գորիս) ծրագրի տարբեր փուլերում աջակցության և մասնակցության համար: Նրանց արժեքավոր ներդրումը մեծապես նպաստեց երիտասարդ դատական մշտադիտարկողների իրավական գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

Տիկին Գանդալյանը, տիկին Թումանյանը և տիկին Մնացականյանը պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու հետագա նախաձեռնությունների շրջանակում և ակտիվորեն ներգրավվելու նոր ձևաչափերի ստեղծման գործում:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում **ՀՀ Ներքին գործերի նախարարությանը**, ներառյալ Կապանի, Գորիսի, Մեղրիի և Վանաձորի ոստիկանության և պարեկապահակային բաժիններին՝ երիտասարդների հետ արժեքավոր փոխգործակցության համար, իրավապահների հետ առնչվելիս իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու համար:

Մենք նաև բարձր ենք գնահատում **ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** աջակցությունը, ինչպես նաև **Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի** (ԿԶՆԱԿ) դրական փորձագիտական եզրակացությունը: Կարծիքն ընդգծում է ծրագրի՝ ավագ դպրոցի աշակերտների և ուսանողների շրջանում վերապատրաստման միջոցով մարդու իրավունքների նկատմամբ հետաքրքրության զարգացման նպատակը՝ միաժամանակ խրախուսելով ակտիվ քաղաքացիական ներգրավվածությունը: Երիտասարդների հետ մարդու իրավունքների կրթության «Կողմնացույց» ձեռնարկի հայերեն տարբերակը կարևորվել է որպես ինտերակտիվ ուսուցման հիմնական ռեսուրս և որպես դասընթացավարների երկարաժամկետ ուղեցույց:

Վերջապես մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում **երիտասարդ դատական մշտադիտարկողներին** իրենց նվիրվածության և քրտնաջան աշխատանքի համար. հենց դա' հնարավոր դարձրեց այս ծրագիրը: Կարծում ենք, որ ապագա ծրագրերի համար արժե ներգրավել մշտադիտարկողների ավելի շատ մարզերից, օգտագործել առցանց հարթակները դատական գործերի ընթացքին հետևելու և համագործակցության համար, ինչպես նաև ուժեղացնել ներգրավվածությունը պետական մարմինների և դատարանների վարչակազմերի հետ՝ կամավորների մուտքը դատարան հեշտացնելու նպատակով:

4. Մեթոդաբանությունը

Մարդու իրավունքների և օրենքի գերակայության նախադրյալները

2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների և օրենքի գերակայության լանդշաֆտը շարունակում է մնալ բարդ՝ նշանավորվելով և՛ մարտահրավերներով, և՛ որոշակի առաջընթացով: Թեև օրենքը ձևական (ֆորմալ) առումով նախատեսում է անկախ դատական համակարգ, վերջինս կոռուպցիայի, քաղաքական ազդեցության և բովանդակալից բարեփոխումներին դիմադրության երկարամյա պատմության պատճառով շարունակում է պայքարել կողմնակալության ընկալման դեմ: Աղմկահարույց սկանդալները և դատավորների վրա կառավարության և նախկին վարչակարգի ազդեցության մասին չհաստատված հաղորդումներն է'լ ավելի են քայքայել հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ: Գործերի մեծ ծավալները, զուգորդված հանրային թերահավատության և կառավարական ճնշման մասին պնդումների հետ, հետ են կանգնեցրել որակավորված մասնագետներին դատավորի պաշտոններ զբաղեցնելուց:

2023 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած հակակառավարական ցույցերի հետևանքները բացահայտեցին իրավապահ մարմինների վարքագծի հետ կապված լուրջ խնդիրները՝ ոստիկանների՝ ապօրինի ուժ կիրառելու և կառավարության կողմնակիցների՝ լրագրողների նկատմամբ ոտնձգությունների ու բռնության դեպքերի մասին հաղորդումներով:

Չնայած արդարադատության հրատապ անհրաժեշտությանը, 2020 թվականին Ադրբեջանի հետ զինված հակամարտության ժամանակ կատարված ենթադրյալ ռազմական հանցագործությունների և միջազգային իրավունքի այլ խախտումների հետաքննության հարցում առաջընթաց չի արձանագրվել: Որոշ փաստաբաններ հայտնել են կալանավայրերում գտնվող իրենց պաշտպանյալների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի մասին: Բնապահպան ակտիվիստները նույնպես շարունակել են բախվել ոտնձգությունների, ինչը վկայում է քաղաքացիական ակտիվության և ազատ արտահայտման մշտական մարտահրավերների մասին:

Այնուամենայնիվ, արձանագրվել են նաև դրական զարգացումներ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 13 արձանագրությունը՝ ամբողջությամբ վերացնելով մահապատիժը բոլոր հանգամանքներում, այդ թվում՝ պատերազմի ժամանակ: Այս քայլը նշանակալի էր ՀՀ-ի իրավական դաշտը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին հավատարմություն դրսևորելու տեսանկյունից նույնիսկ ավելի խորը համակարգային խնդիրների պայմաններում[5]:

Ծրագրի անհրաժեշտությունն առավել քան պարզ է դառնում անցնող տարվա ընթացքում ՀՀ-ում մարդու իրավունքների և օրենքի գերակայության բարդ իրավիճակի լույսի ներքո. դատավորների կողմնակալության ընկալումներ, քաղաքական ազդեցություն և հանրային անվստահություն:

Այս ծրագիրը նպատակ ուներ երիտասարդներին զինելու իրավական գիտելիքներով և զարգացնելու դատական մշտադիտարկման մշակույթը, որն էական նշանակություն ունի դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Հատկապես Սյունիքում, որտեղ տեղական ինքնակառավարումը և դատական համակարգը բախվում են եզակի մարտահրավերների, ծրագիրը նպատակ ուներ վերացնելու հանրային իրազեկվածության բացերը և նպաստելու իրավունքների ավելի խոր ըմբռնմանը: Սյունիքի ռազմավարական դիրքը և բարդ սոցիալ-քաղաքական դինամիկան այն դարձնում են կարևորագույն տարածք քաղաքացիական ներգրավվածության զարգացման համար:

[5] Տե՛ս ՀՀ-ի վերաբերյալ մարդու իրավունքների 2023 թվականի զեկույցը, https://am.usembassy.gov/2023-human-rights-report-on-armenia/

Տեղի ոստիկանության հետ հանդիպումները այս նախաձեռնության կարևոր մասն էին, քանի որ դա թույլ տվեց երիտասարդներին ավելի լավ հասկանալ իրավապահների դերն իրավական համակարգում, խրախուսել բաց երկխոսությունը և ավելի ամուր կապեր ստեղծել երիտասարդների և իրավապահների միջև: Այս գործողությունների նպատակն էր ձևավորել առավել ակտիվ և տեղեկացված երիտասարդական հանրություն, որը կկարողանա ջատագովել արդարությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև ավելի մոտիվացված կլինի ինքազարգանալու այն համայնքում, որտեղ ապրում է:

Երիտասարդ մասնակիցների ընտրությունը

«Դատական մշտադիտարկում և ակտիվ քաղաքացիության ձևավորմանն ուղղված իրավական իրազեկում Սյունիքի մարզում» ծրագիրը նախատեսել էր տարբեր համայնքներից երիտասարդ մասնակիցների ընտրության բազմազանություն, ներառականություն և ներգրավվածություն ապահովելու մեթոդաբանությունը: Կիրառվել են ստորև բերվող չափանիշները:

- **Տարիքային միջակայք:** Մասնակիցները հիմնականում 13-ից 18 տարեկան ավագ դպրոցի աշակերտներ և 18-ից 25 տարեկան համալսարանականներ էին: Այս տարիքային խումբն ընտրվել է վաղ քաղաքացիական իրազեկումը խթանելու և երիտասարդներին զարգացման կարևոր փուլում իրավական գիտելիքներով զինելու համար:

- **Աշխարհագրական ներկայացվածություն**: Լայն մարզային մասնակցություն ապահովելու համար ընտրանքը ներառում էր երիտասարդների Սյունիքի մարզի տարբեր վայրերից, մասնավորապես Գորիսից, Կապանից և Մեղրիից, ներառյալ տեղական կենտրոնների («Լոֆթ-Մեղրի») ներկայացուցիչների: Բացի դրանից՝ ներգրավվեցին մասնակիցներ մոտակա գյուղական համայնքներից: Այս մոտեցումը տարածվեց Սյունիքից դուրս՝ հավաքագրելով մասնակիցների Երևանից, Շիրակի և Լոռու մարզերից՝ խթանելու միջմարզային փոխանակումն ու համագործակցությունը:

- **Քաղաքացիական ներգրավվածության նկատմամբ հետաքրքրություն:** Թեկնածուներն ընտրվել են՝ ելնելով քաղաքացիական գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության կամ համայնքային ծրագրերին մասնակցության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունից: Նախապատվություն տրվեց նրանց, ովքեր նախկինում կամավորության կամ դպրոցական կամ համայնքային ծրագրերում ներգրավվածության պատմություն ունեին, քանի որ դա խոսում էր նրանց քաղաքացիական մասնակցության պատմության և հետևողականության մասին:

- **Ներառականություն և գենդերային հավասարակշռություն:** Ընտրության գործընթացում առաջնահերթություն է տրվել գենդերային հավասարակշռությանը, ինչը հանգեցրել է աղջիկների ավելի մեծ ներգրավվածության՝ համահունչ երիտասարդ աղջիկների համար հավասար հնարավորություններ խթանելու կազմակերպության հանձնառությանը: Նաև ջանքեր են գործադրվել մասնակից դարձնելու տարբեր սոցիալ-տնտեսական ծագման երիտասարդների՝ արտացոլելու մարզային բազմազանությունը և ապահովելու կրթական և մասնակցային հնարավորությունների հավասար հասանելիությունը:

- **Շարունակական ներգրավվածության հանձնառություն:** Հնարավոր մասնակիցները գնահատվել են ծրագրի ողջ ընթացքին մասնակցելու իրենց պատրաստակամության հիման վրա, ներառյալ վերապատրաստման դասընթացները, դատական մշտադիտարկման գործունեությունը և վերապատրաստմանը հաջորդող գործողությունները: Սա երաշխավորեց, որ մասնակիցներն ակտիվորեն ներգրավված լինեն և նպաստեն ծրագրի երկարաժամկետ նպատակներին հասնելուն:

Վերապատրաստման դասընթացների մեթոդաբանությունը

Դասընթացների մեթոդաբանությունը նախագծված էր այնպես, որ դրանք լինեն ինտերակտիվ, գրավիչ և հարմարեցված մասնակիցների գիտելիքների և փորձի տարբեր մակարդակներին: Վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են երկու հիմնական խմբերի համար՝ սկսնակ (61.15%) և ավելի բարձր մակարդակի մասնակիցներ (առաջատարներ) (38.85%): Երկու խմբերի համար ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով օգտագործվել են հետևյալ ինտերակտիվ եղանակները:

- Մասնակիցներին ներկայացվեցին իրական կյանքի դեպքեր և իրենց մարզերին առնչվող վարկածային իրավական սցենարներ: Այս մեթոդի միջոցով նրանք կարողացան պատկերացնել կառավարության, դատավորի, փաստաբանի, դատախազի և դատական մշտադիտարկողի դերերը, ըստ այդմ՝ նաև իրավական գործընթացները: Այս մեթոդը հատկապես արդյունավետ էր՝ օգնելու սկսնակ մասնակիցներին ըմբռնելու մարդու իրավունքների և թափանցիկության բարդ հասկացությունները: Ինչ վերաբերում է առաջատար մասնակիցներին, ապա նրանք ներգրավվեցին ՀՀ-ում արդար դատավարությունների և հակակոռուպցիոն խնդիրների ավելի զգայուն քննարկումների և վերլուծությունների մեջ:

- Դասընթացների ծրագրերը կենտրոնացած էին գործնական հմտությունների զարգացման վրա. ինչպես դիտարկել դատական նիստերը, ինչ մեթոդներով գրառումներ անել և դատական մշտադիտարկման ինչ էթիկական կողմեր հաշվի առնել: Սկսնակները սովորեցին դատական մշտադիտարկման հիմունքները, իսկ առաջատարներն աշխատեցին ավելի բարդ խնդիրների վրա, ինչպիսիք են դատական թափանցիկության վերլուծությունը և դատավարությունների արդարության գնահատումը: Այս գործողությունները նախատեսված էին երիտասարդների մեջ վստահություն ստեղծելու համար՝ նրանց տրամադրելով արժեքավոր առցանց գործիք՝ դատական մշտադիտարկման ձևը, որը նրանք օգտագործեցին դատական նիստերի դիտորդության ժամանակ:

- Դասընթացի ընթացքում կազմակերպության իրավական փորձագետները, ինչպես նաև դատավորներն ու ոստիկանության և պարեկային ծառայությունների ներկայացուցիչները կիսվեցին իրենց գիտելիքներով և փորձով: Այս փորձագետների հետ անցկացվեցին ակտիվ հարցուպատասխան և քննարկումներ՝ թույլ տալով մասնակիցներին հարցեր տալ և անմիջականորեն շփվել ոլորտի մասնագետների հետ: Սա և՛ սկսնակ, և՛ առաջատար խմբերին տվեց արժեքավոր պատկերացումներ իրավական հայեցակարգերի գործնական կիրառման վերաբերյալ:

- Ծրագրի կարևոր բաղադրիչը համագործակցային ուսուցումն է, որտեղ ավելի փորձառու մասնակիցները դասընթացին հաջորդող դատական մշտադիտարկման ժամանակ ուսուցանեցին

սկսնակներին: Այս մոտեցումը ոչ միայն ամրապնդեց մասնակիցների միջև կապերը, այլև ուսուցման գործընթացը, քանի որ ուրիշներին սովորեցնելը ըմբռնումը խորացնելու ապացուցված մեթոդ է: Առաջատար մասնակիցները, որոնք որոշակիորեն ծանոթ էին իրավական հասկացություններին և պրակտիկաներին, ուղեկցեցին և աջակցեցին սկսնակներին դատական մշտադիտարկման բարդ գործընթացի միջով անցնելիս:

Այս ինտերակտիվ վերապատրաստման մեթոդները կարևոր նշանակություն ունեցան մասնակիցների վստահության և հիմնական թեմաների ըմբռնման ձևավորման համար՝ ապահովելով, որ ինչպես սկսնակ, այնպես էլ առաջատար խմբերը լավ պատրաստվեն դատական մշտադիտարկման գործունեությանը և ծրագրի ավելի ընդգրկուն նպատակների իրագործմանը: Համատեղելով տեսականը գործնական փորձի հետ՝ դասընթացը զարգացրեց ոչ միայն իրավական գիտելիքներ, այլև քաղաքացիական պատասխանատվության և ներգրավվածության ուժեղ զգացում:

Դատական մշտադիտարկման և դատական համակարգի հետ փորձի փոխանակման գործընթացների ակնարկ

Ծրագրի դատական մշտադիտարկման բաղադրիչը նպատակ ուներ երիտասարդ մասնակիցներին զինելու այն գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են դատական գործընթացները քննադատաբար և տեղեկացված դիտարկելու և գնահատելու համար: Գործընթացը նախատեսված էր ինչպես տեսական, այնպես էլ գործնական ուսուցում ապահովելու, դատական նիստերի արդյունավետ վերահսկմանը օգնելու, դատական թափանցիկությունը և դատավարությունների արդարությունը գնահատելու համար:

Մասնակիցները վերապատրաստվեցին դատական մշտադիտարկմանն առնչվող քայլերի վերաբերյալ՝ սկսած դատական իշխանության կառուցվածքի և գործառույթների ըմբռնումից մինչև դատավարության դիտարկման հատուկ ընթացակարգեր: Նրանք սովորեցին հիմնական տեղեկությունները գրանցելու ձևերը:

Դատական մշտադիտարկման գործընթացում օգտագործված առաջնային միջոցը *դատական մշտադիտարկման ձևն* էր՝ առցանց գործիք, որը նախատեսված է տվյալների ճշգրիտ և արդյունավետ հավաքման համար: Այն մասնակիցներին ուղղորդում էր դատական նիստերի ընթացքում էական տեղեկություններ գրանցելու հարցում և օգնում ապահովել դիտարկումների հետևողականությունն ու հավաստիությունը: Այն հարմար գործիք է օգտագործողի համար. թույլ է տալիս կենտրոնանալ վարույթի բովանդակության վրա՝ առանց տեխնիկական դժվարությունների:

Հուլիսի 1-ից նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում 154 մշտադիտարկողները լրացրել են 603 ձև, ինչը ցույց է տալիս, որ վերոնշյալ քաղաքներում գտնվող ընդհանուր իրավասության դատարաններում երիտասարդ մշտադիտարկողները դիտարկել են 603 դատական նիստ 591 քրեական գործով:

Ծրագրի հիմնական առանձնահատկությունն էր երիտասարդ մասնակիցների և դատական համակարգի հիմնական շահագրգիռ կողմերի անմիջական փոխգործակցության խրախուսումը: Մասնակիցները հնարավորություն ունեցան հանդիպելու դատավորների հետ: Փորձի փոխանակման այս հանդիպումները մասնակիցներին տվեցին արժեքավոր պատկերացումներ

դատական համակարգի աշխատանքի գործնական կողմի վերաբերյալ, թույլ տվեցին նրանց կիսվել իրենց դիտարկումներով և մտահոգություններով և նպաստեցին բաց երկխոսությանը, որի ընթացքում երիտասարդ մշտադիտարկողները քննարկեցին մշտադիտարկումից ստացած իրենց տպավորությունները և բացահայտումները, հարցեր տվեցին և պատասխաններ ստացան:

Այս ուղղակի փոխանակումը մասնակիցներին օգնեց պատկերացում կազմելու դատական համակարգի առջև ծառացած մարտահրավերների, իրավական համակարգում թափանցիկության և հաշվետվողականության կարևորության մասին, ըմբռնելու, թե ինչպես է գործում դատական համակարգը ՀՀ-ում, գիտակցելու դատավորների դերը օրենքի պահպանման գործում և ձեռնարկված միջոցները՝ արդար դատավարություն ապահովելու համար: Մասնակիցները ծանոթացան իրավական որոշումների կայացման բարդություններին և նրան, թե ինչպես է դատական մշտադիտարկումը նպաստում արդարադատության համակարգի բարելավմանը:

Այս փոխազդեցություններն օգնեցին նաև ցրելու դատական գործընթացի վերաբերյալ թյուր պատկերացումները, նպաստեցին դատարանների նկատմամբ ավելի մեծ վստահություն տածելուն և օրենքի գերակայության նկատմամբ հարգանքին, ինչպես նաև թույլ տվեցին երիտասարդ մասնակիցներին զարգացնել քննադատական մտածողությունը, վերլուծական հմտությունները և ՀՀ-ում իրավական գործընթացների ավելի խոր ընկալումը:

Վերապատրաստման և դատական մշտադիտարկման նախաձեռնությունները հիմնականում օգտակար են եղել երիտասարդ կամավորների համար, սակայն դրանք կարող են նաև անուղղակի դրական ազդեցություն ունենալ այն դատավորների վրա, որոնց հետ մշտադիտարկողները փոխհարաբերվել են: Դատական նիստերը մշտադիտարկող կամավորները իրենց դիտորդությամբ հավանաբար խրախուսել են դատավորներին ավելի խստորեն պահպանել ընթացակարգերը:

Տեղացի կամավորների ներգրավումը հատկապես Սյունիքի մարզում օգնեց զարգացնելու հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ՝ խթանելով թափանցիկությունն ու բաց լինելը: Դատավորները տեղեկացան դատական մշտադիտարկման նոր հեռանկարների և թվային գործիքների մասին, որոնց կիրառումը կարող է նպաստել գործերի վարման և դատական արդյունավետության բարձրացմանը:

Կամավորների դիտարկումները կարող են օգնել դատավորներին բացահայտելու բարելավման ենթակա ոլորտները, ինչպիսիք են, օրինակ, ընթացակարգային ձգձգումները: Ի վերջո կամավորների անկախ մշտադիտարկումն ամրապնդեց այն գաղափարը, որ դատական համակարգը պետք է գործի թափանցիկ և զերծ լինի արտաքին ազդեցությունից:

Ոստիկանության հետ փոխգործակցության ազդեցությունը երիտասարդների՝ օրենքի գերակայության ըմբռնման վրա

ՀՀ իրավապահ համակարգի մասին ամբողջական պատկերացում կազմելու ծրագրի նպատակի շրջանակներում մասնակիցները հնարավորություն ունեցան այցելելու Գորիսի, Կապանի, Մեղրու և Վանաձորի ոստիկանության բաժիններ (Վանաձորում՝ տեղի երիտասարդների խմբի խնդրանքով): Այս այցելությունները վերապատրաստման կարևոր

բաղադրիչ էին. դրանց ընթացքում երիտասարդներն անմիջականորեն էին ծանոթանում իրավապահ գործողություններին և իրենց դերին, իրավունքներին ու պարտականություններին ոստիկանության բաժնում հայտնվելու դեպքում:

Այդ այցելությունների ընթացքում մասնակիցները ծանոթացան ոստիկանության բաժնի ամենօրյա գործունեությանը: Նրանք տեղեկացան իրական մարտահրավերների մասին, որոնց բախվում են ոստիկանները հասարակական կարգը պահպանելիս, արտակարգ իրավիճակներին արձագանքելիս և համայնքի անվտանգությունն ապահովելիս: Նրանք նաև ծանոթացան իրավապահ մարմինների՝ օրենքը պահպանելու և քաղաքացիներին պաշտպանելու գործիքներին և մեթոդներին, ինչը խորացրեց հասարակության մեջ ոստիկանության բարդ դերի նրանց հասկացողությունը:

Մասնակիցներին ներկայացվեցին իրավական համակարգում իրենց իրավունքներն ու պարտականությունները: Նրանք տեղեկացան տարբեր ընթացակարգերի մասին (ձերբակալություններ և խուզարկություններ), որոնցով տարբեր իրավիճակներում գործում են իրավապահները, և իրազեկվեցին քաղաքացիների իրավական պաշտպանության միջոցների մասին:

Հանդիպումները նաև արժեքավոր պատկերացում տվեցին իրավապահ մարմինների թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանն ուղղված շարունակական ջանքերի վերաբերյալ: Երիտասարդներին ներկայացվեցին ոստիկանական համակարգի բարեփոխումների նախաձեռնությունները, որոնք ուղղված են հասարակության վստահության ամրապնդմանը, կոռուպցիայի նվազեցմանը և իրավապահ մարմինների և համապատասխան համայնքների միջև փոխգործակցության բարելավմանը:

Ծանոթանալով ոստիկանության ծառայողների մարտահրավերներին և պարտականություններին՝ մասնակիցներին խրախուսեցին քննադատաբար մտածել հասարակության մեջ իրենց դերի մասին և մտորել, թե ինչպես կարող են ներգրավվել արդարության, անվտանգության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը խրախուսելու գործում:

Այս գործողության մեջ ներգրավվեցին ընդհանուր թվով 120 երիտասարդներ Սյունիքի և Լոռու մարզերից:

Ծրագրի գործունեության ընդլայնումը դեպի Մեղրի

«Համերաշխություն» հիմնադրամի հետ հաջող համագործակցության տարիների ընթացքում մեր գործունեության ընդլայնումը դեպի Սյունիքի մարզ և այս տարի նաև Մեղրի քաղաք էական դեր խաղաց նախաձեռնության շրջանակի և ազդեցության սփռման գործում, մասնավորապես Սյունիքի այս հեռավոր մասում երիտասարդության շրջանում քաղաքացիական ներգրավվածության խթանման գործում: Մեղրին, լինելով աշխարհագրորեն ավելի մեկուսացված, համեմատած Գորիսի և Կապանի հետ, առաջ բերեց ներգրավման յուրահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ:

Ծրագիրը երաշխավորեց, որ երիտասարդները ներկայացված լինեն Սյունիքի բոլոր մասերից՝ նպաստելով մարզային կապերի ամրապնդմանը և միասնության զգացմանը: Այս աճող

ներկայացվածությունը նաև թույլ տվեց ավելի համապարփակ հասկանալ քաղաքացիական ներգրավվածության, իրավական իրազեկման և արդարադատության համակարգին առնչվող այն մարտահրավերներն ու հնարավորությունները, որոնց բախվում են տեղի երիտասարդները:

Հաշվի առնելով Մեղրիի սոցիալ-մշակութային և աշխարհագրական առանձնահատկությունները՝ ծրագրային թիմը հարմարեցրեց իր մոտեցումը՝ այս ոլորտում երիտասարդ մասնակիցների կարիքներին ավելի արդյունավետ արձագանքելու համար:

Ցավոք սրտի, մենք ստիպված էինք բախվել մի էական խնդրի. Մեղրիի դատարանը փակվել էր, և այնտեղի միակ դատավորը տեղափոխվել էր Կապան: Արդյունքում Մեղրիի մասնակիցները զրկվեցին դատական մշտադիտարկմանը մասնակցելու հնարավորությունից: Մոտակա վայրը Կապանն է, որ ավտոմեքենայով ուղևորվելու դեպքում Մեղրիից մոտ երկու ժամվա հեռավորության վրա է: Սա խոչընդոտեց երիտասարդների՝ ի սկզբանե պլանավորված մասնակցությունը դատական մշտադիտարկմանը:

Տվյալների հավաքման և մասնակիցների հետադարձ կապի նոր գործիքներ

Տվյալների հավաքման և մասնակիցների հետադարձ կապի համար նոր գործիքների և մեթոդների ներդրման նպատակն է բարձրացնել մշտադիտարկման գործողությունների ճշգրտությունն ու արդյունավետությունը: Դրանք նպաստում են մասնակիցների փորձառություններին իրական ժամանակում հետևելուն՝ թույլ տալով անմիջապես շտկել ծրագրի գործողությունները նրանց ներկայացրած տվյալների հիման վրա:

Հետադարձ կապի մեխանիզմները ինտեգրված են մշտադիտարկման ձևի և շարունակական ուսումնասիրության մեջ, ինչը ծրագրի թիմին հնարավորություն է տալիս գնահատելու վերապատրաստման արդյունավետությունը, բացահայտելու բարելավման ենթակա ոլորտները և չափելու նախաձեռնության ընդհանուր ազդեցությունը երիտասարդների՝ իրավական համակարգի ըմբռնման վրա:

Այս մոտեցումը նաև բացահայտում է դատական համակարգի թերություններն ու մարտահրավերները՝ ըստ երիտասարդ մասնակիցների դիտարկումների, որոնք շատ դեպքերում խորապես ծանոթ չեն համակարգին կամ իրավական բարդություններին: Կազմակերպության փորձագետը հավաքել, վերլուծել և ներկայացրել է քանակական տվյալներ, ինչպես նաև որակական պատկերացումներ, որոնք ստուգվել են փորձառու մարզային համակարգողների կողմից: Այս մոտեցումն ապահովել է ծրագրի ընթացքում արված դիտարկումների և հետադարձ կապի ճշգրտությունն ու հավաստիությունը:

5. Դատական մշտադիտարկման ձևերի ամփոփում

Թվային գործիքների միջոցով ձեռք բերված տվյալների համաձայն՝ 2024 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ Կապանի, Գորիսի, Գյումրիի և Վանաձորի, ինչպես նաև Երևանի երկու ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 154 երիտասարդներ դիտորդել են 591 քրեական գործով 603 նիստ:

Գծապատկեր 1. Գրանցված օգտատերերի քանակը և համապատասխան տոկոսաչափը՝ ըստ մարզի[6]



Հ/Հ	ՄԱՐԶ	ԳՐԱՆՑՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՏՈԿՈՍԱՉԱՓԸ
1	Սյունիք	91	58.3%
2	Երևան	18	11.5%
3	Շիրակ	24	15.4%
4	Լոռի	21	13.5%
Ընդամենը		**154**	

Գծապատկեր 2. Դատական մշտադիտարկման լրացված հարցաշարերի քանակը և համապատասխան տոկոսաչափը՝ ըստ մարզի



[6] Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներն արտացոլում են մուտքերը 2024 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ: Գծապատկերում ներառված են տվյալներ նաև ՀՀ-ի այլ մարզերից, որոնք ի սկզբանե ծրագրի մաս չեն եղել, սակայն որտեղից հետագայում գրանցվել են կամավորներ: Թարմացված տե՛ս այստեղ՝ https://hahr.am/region/:

Հ/Հ	ՄԱՐԶ	ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՏՈԿՈՍԱՀԱՖԸ
1	Սյունիք	109	18.1%
2	Երևան	148	24.5%
3	Շիրակ	226	37.5%
4	Լոռի	120	19.9%
Ընդամենը		**603**	

Թեև Սյունիքն ուներ ամենաշատ մասնակիցները, ներկայացված դատական դիտարկման ձևաթղթերի ընդհանուր թիվը զգալիորեն ավելի քիչ է: Սյունիքում յուրաքանչյուր կամավոր միջին հաշվով մշտադիտարկել է միայն մեկ լսում:

Այս բացը մատնանշում է հնարավոր մարտահրավերները, որոնք կարող են խոչընդոտել հետևողական մասնակցությունը: Նպաստող գործոններից կարող են լինել նյութատեխնիկական դժվարությունները, ինչպիսիք են բնակության վայրի և դատարանի միջև առկա զգալի հեռավորությունը (հատկապես գյուղական վայրերից և Մեղրիից, որտեղ դատարանը փակվել էր), մոտակա գործող դատարան հասնելու համար փոխադրամիջոցների սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև այնպիսի անձնական խոչընդոտներ, ինչպիսիք են անձնական համակարգիչ կամ խելախոս չունենալը, որը անհրաժեշտ էր թվային տվյալների մուտքագրման համար:

Լրացուցիչ խոչընդոտներից են Մեղրիում քրեական դատարանի բացակայությունը, քրեական գործեր վարող դատավորների փոքր թիվը, դատավորների հաճախակի հոսքը, դատավորների արձակուրդի ժամկետը օգոստոս ամսին և դատական կարգադրիչների անբավարար աջակցությունը երիտասարդ մշտադիտարկողներին դատարան անխոչնդոտ մուտք գործելու և նշանակված նիստերի մասին համապատասխան տեղեկություններ ստանալու համար:

Դատական մշտադիտարկման ձևի օգտատերերը պետք է լրացնեն այնպիսի հիմնական տվյալներ, ինչպիսիք են իրենց անունը, բնակության մարզը և քաղաքը, նաև առաջարկվում է ընտրել դատարանի անվանումը, որտեղ իրականացվել է մշտադիտարկումը, նախագահող դատավորի անունը, ամբաստանյալի (ների) անունը (ները), գործի համարը, նշանակված նիստի ամսաթիվը, ժամը և այլն:

Նրանց նաև առաջարկվում է արձանագրել ձեռք բերված տեղեկույթը ստորև բերվող հարցերի վերաբերյալ:

Հ/Հ	ՀԱՐՑ	«ԱՅՈ»	Որից Սյունիքում	«ՈՉ»	Որից Սյունիքում
1	Դատական կարգադրիչները զննու՞մ են դատարան մտնող անձին:	356 / 59%	77 / 70,6%	247 / 41%	32 / 29.4%
2	Արդյո՞ք նիստը մեկնարկել է նշանակված ժամին:	328 / 54.4%	82 / 75.2%	275 / 45.6%	27 / 24,8%
3	Դատավարության կողմերը տեղեկացվե՞լ են իրենց իրավունքների մասին:	446 / 97%	105 / 97.2%	14 / 3%	3 / 2.8%
4	Պահպանվե՞լ է արդյոք դռնբաց դատավարության իրավունքը:	593 / 98.3%	103 / 94.5%	247 / 1.7%	6 / 5.5%
5	Պահպանվե՞լ է թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքը:	43 / 96%	99 / 90.8%	24 / 4%	10 /9.2%
6	Վկայի հարցաքննության ժամանակ նիստերի դահլիճում այլ վկաներ եղե՞լ են:	85 / 14.1%	23 / 21.1%	518 / 85.9%	86 / 78.9%
7	Պահպանվե՞լ է կողմերի հավասարության իրավունքը:	587 / 97.3%	103 / 94.5%	10 / 1.7%	6 / 5.5%
8	Պահպանվե՞լ է անմեղության կանխավարկածի սկզբունքը:	199 / 87.7%	77 / 82.8%	28 / 12.3%	16 / 17.2%
9	Դատարանի կողմից կիրառվե՞լ է որևէ ճնշում մեղադրյալի նկատմամբ:	3 / 0.5%	0 / 0%	598 / 99.2%	109 / 100%
10	Դատարանի կողմից կիրառվե՞լ է որևէ ճնշում վկայի / փորձագետի նկատմամբ:	48 / 10%	7 /6.5%	433 / 90%	100 / 93.5%

Գծապատկեր 3. Պաշտպանական կողմի կարծիքով՝ պաշտպանական և/կամ մեղադրող կողմերին տրվե՞լ է պատշաճ ժամանակ գործի նյութերին ծանոթանալու համար։



- Այո – 212 կամ 53.8%,
որից Սյունիքում – 104 կամ 95.4%

- Ոչ – 182 կամ 46.2%,
որից Սյունիքում – 5 կամ 4.6%

Գծապատկեր 4. Մեղադրող կողմի կարծիքով՝ պաշտպանական և/կամ մեղադրող կողմերին տրվե՞լ է պատշաճ ժամանակ գործի նյութերին ծանոթանալու համար։

- Այո – 205 կամ 53.9%,
որից Սյունիքում – 99 or 90.8%

- Ոչ – 175 կամ 46.1%,
որից Սյունիքում – 10 կամ 9.2%



Գծապատկեր 5. Պաշտպանական կողմի կարծիքով՝ դատավարության կողմերին բավարար ժամանակ տրամադրվե՞լ է միջնորդություններ ներկայացնելու համար։



- Այո – 178 կամ 52%, որից Սյունիքում – 101 կամ 92.7%
- Ոչ – 164 or 48%, որից Սյունիքում – 8 կամ 7.3%

Գծապատկեր 6. Մեղադրող կողմի կարծիքով՝ դատավարության կողմերին բավարար ժամանակ տրամադրվե՞լ միջնորդություններ ներկայացնելու համար։

- Այո – 176 կամ 51.9%, որից Սյունիքում – 102 կան 93.6%
- Ոչ – 163 կամ 48.1%,, որից Սյունիքում – 7 կամ 6.4%



Ստորև ներկայացնում ենք մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա կազմված դրական և բացասական կողմերի մի քանի օրինակ։

- **Դրական կողմեր**

1. Մեծ հավատարմություն իրավունքների պաշտպանությանը.

o գործերի 98.3%-ի դեպքում հարգվել է դռնբաց դատավարության իրավունքը.

o կողմերի 97%-ը տեղեկացվել է իրենց իրավունքների մասին.

o գործերի 97.3%-ի դեպքում պահպանվել է բոլոր կողմերի հավասարության իրավունքը.

o գործերի 87.7%-ի դեպքում պաշտպանվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը։

2. Դատական ընթացակարգեր.

o դատարան մուտք գործող անձանց 59%-ը պատշաճ կերպով զննվել է դատական կարգադրիչների կողմից, ինչը ցույց է տալիս, որ առկա են անվտանգության որոշակի մակարդակի ընթացակարգեր.

o գործերի 99.2%-ից պարզ է դարձել, որ մեղադրյալի նկատմամբ ճնշում չի գործադրվել՝ պահպանելով արդար վերաբերմունք.

o վկաները և փորձագետները գործերի 90%-ի դեպքում նշել են, որ ճնշում չի գործադրվել.

o գործերի 96%-ի դեպքում պահանջվել է թարգմանիչ. պահանջը կատարվել է, ինչը նպաստում է արդարադատության մատչելիությանը հայերեն չխոսողների համար.

o դատավարությունների 85.9%-ի դեպքում թույլ չի տրվել վկաներին ներկա գտնվել մեկ այլ վկայի հարցաքննության ժամանակ:

- **Բացասական կողմեր**

o Նիստերի միայն 54,4%-ն է սկսել ժամանակին, իսկ 45,6%-ը՝ ուշացումով: Սա խոսում է այն մասին, որ դատական գործընթացներում ճշտապահության ուղղությամբ աշխատելու կարիք կա:

o Գործերի 12.3%-ի դեպքում լիովին չի հարգվել անմեղության կանխավարկածի սկզբունքը։

o Դատական կարգադրիչների կողմից մուտքի պահին չզննված անձանց համեմատաբար բարձր տոկոսը ցույց է տալիս, որ կարող են լինել անվտանգության կամ ընթացակարգային հետևողականության թերություններ:

6. Առաջարկներ

Դատական մշտադիտարկման ձևի միջոցով հավաքված տվյալների վերլուծությունը արժեքավոր պատկերացումներ տվեց դատական գործընթացների վերաբերյալ և բացահայտեց մի քանի հիմնական իրողություններ, որոնք կարևոր են ինչպես դատական համակարգի ուժեղ կողմերը, այնպես էլ բարելավման ոլորտները հասկանալու համար:

Տվյալները վեր են հանել նաև դատական գործընթացների օրինաչափությունները, դատական պրակտիկայի հետևողականությունը և դատավարությունների ընթացքում պահպանված

թափանցիկության մակարդակը: Հատկանշական է, որ երիտասարդ մասնակիցները կարողացել են բացահայտել ինչպես **դրական կողմերը**, օրինակ՝ օրինական ընթացակարգերի արդարությունը և որոշ դատավորների պրոֆեսիոնալիզմը, այնպես էլ **բարելավման կարիք ունեցող ոլորտները**, օրինակ՝ իրավական հաղորդակցության և տեղեկատվության հանրայնացման հստակությունը, դատական գործընթացների մատչելիությունը, գործերի վարման ընդհանուր արդյունավետությունը: Այս դիտարկումները կարևոր հիմք են դատական համակարգի նկատմամբ արդյունավետության և հանրային վստահության բարձրացմանն ուղղված նպատակային բարեփոխումներ առաջարկելու համար:

Երիտասարդները կարծիք են հայտնել, որ կարիք կա ձգտելու ավելի շատ թափանցիկության, դատական համակարգի ներսում և դրանից դուրս հաղորդակցության բարելավման, ինչպես նաև հանրության համար տեղեկատվության հասանելիության մեծացման, իրավական չափանիշների ավելի հետևողական կիրառման: Վստահությունն ու հաշվետվողականությունը խթանող հավաքական ցանկությունը հիմնավորում է շարունակական բարեփոխումների և հանրային ներգրավվածության անհրաժեշտությունը:

Բացահայտվել է, որ նախորդ տարիներին հայտնաբերված որոշ թերություններ դեռ պահպանվում են: Օրինակները ներկայացնում ենք ստորև:

1. Նիստերի մեծ մասն սկսվել են նախատեսված ժամից ուշ:

2. Որոշ դեպքերում գործով կողմերը ներկա են եղել նիստերի դահլիճում, սակայն դատավորը զգալիորեն ուշացել է:

3. Շատ դեպքերում նախագահող դատավորներն ուշացումների վերաբերյալ բացատրություններ չեն տվել:

4. Դռնփակ դատավարությունների ժամանակ նիստերի դահլիճների խոսակցությունները լսելի են եղել դրսից:

5. Ապակե պատերով դատական նիստերի դահլիճներում դատավարությունների ընթացքում կողմերի ելույթները դժվար լսելի էին:

6. Ուղեկցող զումարտակի մեքենայով մեղադրյալ/ներ/ին դատարան տեղափոխելու ուշացումները հանգեցրել են նիստերի հետաձգմանը, կամ մեղադրյալ/ներ/ին ընդհանրապես չեն բերել դատարան՝ հանգեցնելով նիստերի հետաձգման:

7. «Դատալեքս» տեղեկատվական համակարգում արձանագրվել են դատական գործերի վերաբերյալ ոչ հաճախակի թարմացումների, իսկ առանձին դեպքերում՝ տեղեկատվության իսպառ բացակայության դեպքեր:

8. «Դատալեքս» տեղեկատվական համակարգ մուտքի կողը բազմիցս մուտքագրելու անհրաժեշտությունը առաջացնում է որոշակի անհարմարություններ և մարտահրավերներ՝ պահանջելով լրացուցիչ ժամանակ և ջանք:

2023-2024 թվականների տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ թեև դատարանների՝ տեղեկատվությունը ավելի մատչելի դարձնելու հարցում որոշակի առաջընթաց է գրանցվել, մարտահրավերներ դեռևս կան: Օրինակ՝ **պաշտպանությանն ու մեղադրող կողմին հատկացված ժամանակը գործի նյութերին ծանոթանալու համար շարունակում է մնալ անբավարար,** ինչն ազդում է լսումներին համարժեք պատրաստվելու նրանց կարողության վրա: Խորհուրդ է տրվում, որ **համակարգը ստանդարտացնի և կիրառի գործի նյութերին ծանոթանալու նվազագույն ժամկետ՝ բոլոր ներգրավված կողմերի համար արդար նախապատրաստություն ապահովելու համար:**

Խորհուրդ է տրվում, որ դատարանները **մեծացնեն դատավարության ընթացակարգերի, դատավճիռների և դատարանների որոշումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հանրության համար**: «Դատալեքս» տեղեկատվական համակարգի հաճախակի խափանումները լուրջ խնդիր են, քանի որ խաթարում են դատական գործընթացների մատչելիությունն ու արդյունավետությունը: Այս համակարգը, որը հաճախ օգտագործվում է գործերի տվյալների կառավարման և հասանելիության համար, կարևոր է ինչպես փաստաբանների, դատավորների, դատական գործընթացներում ներգրավված այլ մասնագետների, այնպես էլ հանրության համար՝ ապահովելով համակարգի թափանցիկությունը և խթանելով վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Նշվել են **դատական ենթակառուցվածքների բարելավմանն** առնչվող մի քանի իրողություններ, որոնք դրականորեն են անդրադառնում դատական գործընթացի վրա: Դրանք ներառում են ապացույցների հետազոտման համար մեծ հեռուստատեսային էկրանների առկայություն դատական նիստերի դահլիճներում, որոնք ավելի հստակ և ըմբռնելի են դարձնում լսումները: Ընդգծվել է նաև որոշ դատարաններում (օրինակ՝ Շիրակի մարզում) հեռահար հարցաքննության միջոցների օգտագործումը, որը թույլ է տալիս վկաների և գործում ներգրավված այլ կողմերի ավելի ճկուն և անվտանգ մասնակցություն:

Ի լրումն՝ դատավորների սեղաններին համակարգիչների առկայությունը նշանակալից քայլ է դատական նիստերի դահլիճների արդիականացման և գործերի վարման պարզեցման ուղղությամբ: Այս տեխնոլոգիական բարելավումները նպաստում են ավելի արդյունավետ դատավարություններին և ընդգծում են դատական համակարգը գործողության և թափանցիկության ժամանակակից չափանիշներին համապատասխանեցնելու ջանքերը:

Զեկույցը նպատակ չունի մանրամասնորեն անդրադառնալու յուրաքանչյուր թերությանը: Այնուամենայնիվ, համապարփակ տեղեկատվությունը հասանելի է, և մենք պատրաստ ենք այս տվյալները տրամադրել համապատասխան պետական մարմիններին, մեր նպաստը բերել

քննարկումների կամ աշխատաժողովների ժամանակ՝ դրական փոփոխությունների համատեղ լուծումներ գտնելու նպատակով:

Թափանցիկությունը և հանրային վստահությունը խթանելու համար կարևոր է **քաղաքացիներին իրազեկել իրենց օրինական իրավունքների** և այն մասին, թե ինչպես օգտվեն գործի վերաբերյալ տեղեկատվությունից: Հանրային իրազեկման արշավները կարող են ներառել տեղեկատվական նյութեր, սեմինարներ և առցանց ռեսուրսներ, որոնց միջոցով մարդիկ կարող են իմանալ՝ ինչպես ստանալ տեղեկություններ իրենց գործերի և իրավական ընթացակարգերի մասին:

Կրթական ծրագրերի միջոցով քաղաքացիների օրինական իրավունքների և դատական համակարգի մասին իրազեկվածության խթանումը կարող է հասարակությանը ավելի արդյունավետ կերպով ներգրավել դատական գործընթացում: Այս ծրագրերը կարող են ընդգրկել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են արդար դատաքննության իրավունքը, իրավական ռեսուրսների հասանելիությունը և արդարադատության գործընթացին մասնակցելու իրավունքը:

Մասնակիցները հաստատակամորեն մտադրություն են հայտնել շարունակելու իրենց ներդրումն ունենալ արդարադատության համակարգում, ընդ որում՝ Սյունիքի մարզից շատերն ընդգծել են, որ իրենց փորձառությունը ազդեցություն է թողել իրենց հայացքների և ներգրավվածության վրա:

Մինչ Սյունիքը պատմականորեն սահմանափակ մասնակցություն է ունեցել արդարադատությանն առնչվող միջոցառումներին, ծրագիրը նկատելի առաջընթաց է գրանցել իրազեկման և ներգրավվածության մեջ: Սյունիքի շատ մասնակիցներ նշել են, որ չնայած մարտահրավերներին, ինչպիսիք են տարածաշրջանի աշխարհագրական և նյութատեխնիկական սահմանափակումները, իրենք այժմ գիտակցում են իրենց դերի կարևորությունը դատական համակարգի թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործում: Շատերը հայտարարել են շարունակական մշտադիտարկման և հետագա իրավական կրթության հանձնառության մասին՝ շեշտը դնելով ավելի լավ պրակտիկաների ջատագովման վրա: Այս ձգտումն արժեքավոր հնարավորություն է ընձեռում օգտագործելու նրանց եռանդը հանրային վերահսկողության ուժեղացման և արդարադատության համակարգն առավել ներառական և թափանցիկ դառնալու համար:

Քաղաքացիական վերահսկողությունն ուժեղացնելու համար քաղաքացիական հասարակության կազմակերպություններին խորհուրդ է տրվում ավելի ակտիվ դերակատարում ունենալ դատական գործընթացների մշտադիտարկման գործընթացում: Իրավապահ մարմինների հետ ավելի ամուր գործընկերության հաստատումը համատեղ վերապատրաստման, հանրային իրազեկման ծրագրերի և համագործակցային նախաձեռնությունների միջոցով կարող է ապահովել, որ և՛ իրավական համակարգը, և՛ իրավապահ մարմինները գործեն մարդու իրավունքների պաշտպանության շրջանակներում:

Երիտասարդներին դատական համակարգի շարունակական մշտադիտարկման և բարեփոխումների ջատագովման գործում ներգրավելը շատ կարևոր է: Երիտասարդությունը կարող է էական դեր խաղալ հաշվետվողականության և հանրային ներգրավվածության խթանման գործում: Առաջարկվում է մշակել բովանդակային ծրագրեր՝ աջակցելու նրանց մասնակցությանը իրավական կրթության, դատական մշտադիտարկման և շահերի պաշտպանության նախաձեռնություններում: Այս ծրագրերը պետք է ապահովեն ռեսուրսներ, ուսուցում և հնարավորություններ այնպես, որ նշանակալիորեն նպաստեն դատաիրավական բարեփոխումների և մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ քննարկումներին՝ ապահովելով, որ հաջորդ սերունդը պատրաստ լինի առաջնորդելու արդարադատության համակարգի ապագա բարեփոխումները:

7. Նորարարական մոտեցումներ

Ծրագիրն արժեքավոր պատկերացումներ է տվել երիտասարդների իրականացրած դատական մշտադիտարկման արդյունավետության և նման նախաձեռնությունների ավելի լայն ազդեցության վերաբերյալ ինչպես դատական համակարգի, այնպես էլ հասարակության վրա: Հիմնական դասերը ներառում են շարունակական վերապատրաստման կարևորությունը, թվային գործիքների ավելի լավ հասանելիության ապահովումը և դատական մշտադիտարկման ջանքերը հանրային իրազեկման արշավների մաս դարձնելը: Այս նախաձեռնությունները ոչ միայն օգնում են երիտասարդների շրջանում իրավական գրագիտության ձևավորմանը, այլև բարելավում են նրանց ներգրավվածությունը հանրային կարևորության հարցերում:

Court Watch Poland-ի հետ համատեղ մշտադիտարկման արդիականացված գործիքների մշակումը ճանաչվել է որպես դատական դիտարկումների արդյունավետությունն ու ճշգրտությունը բարելավելու էական քայլ: Այս գործիքները կարող են հեշտացնել իրական ժամանակում տվյալների հավաքումը, թույլ տալ ավելի լավ վերլուծել դատական գործընթացները և բարձրացնել հաշվետվությունների հասանելիությունը հանրությանը: Թվային գործիքներն իրավական գործընթացի հետ համադրելու ծրագրի հաջողությունը նախադեպ է Հայաստանում և նրա սահմաններից դուրս դատական մշտադիտարկման թվայնացման հետագա ջանքերի համար:

8. Ամփոփում

Մասնակիցները բարձր գոհունակություն են հայտնել ծրագրի մեջ իրենց ներգրավվածության կապակցությամբ: Շատերը նշել են, որ դատական գործընթացների մշտադիտարկման փորձը ոչ միայն մեծացրել է դատական գործընթացների մասին իրենց ըմբռնումը, այլև խորացրել է քաղաքացիական պատասխանատվության զգացումը: Իրական իրավական գործերով զբաղվելու հնարավորությունը նրանց թույլ տվեց գործնական պատկերացումներ ձեռք բերել արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ, ինչը շատերի համար և՛ հզորացնող, զորավորող, և՛ կրթական բնույթ ուներ: Մասնակիցները բարձր են գնահատել իրենց ստացած գիտելիքներն ու աջակցությունը, որն օգնեց առաջադրանքները կատարելիս ավելի ինքնավստահ զգալուն:

Դատական մշտադիտարկման ծրագիրը օգնեց կատարել ՀՀ-ում դատական համակարգի գործունեության վերաբերյալ մի քանի հիմնական բացահայտումներ, օրինակ՝ գործի նյութերին անհամապատասխան հասանելիության, դատական գործընթացների ձգձգումների և դատավարական չափանիշների անհավասար կիրառման վերաբերյալ Այս և նմանօրինակ այլ հարցեր նաև մատնանշում են ընթացակարգերի ստանդարտացման, թվային հասանելիության բարելավման և դատավարական հարցերն արդյունավետ լուծելու դատարանների անձնակազմի կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:

Քաղաքացիական վերահսկողությունն առանցքային դեր է խաղում դատական համակարգի թափանցիկության, հաշվետվողականության և արդարության խթանման գործում: Դատական մշտադիտարկման նման նախաձեռնությունների միջոցով քաղաքացիական հասարակության դերակատարները, հատկապես երիտասարդները իրավասու են դիտարկելու դատական գործընթացները և զեկուցելու դրանց վերաբերյալ՝ երաշխավորելով, որ իրավական գործընթացները պահպանվեն, և իրավունքները պաշտպանվեն: Դատական գործունեության մեջ երիտասարդների ներգրավվածությունը նպաստում է ավելի տեղեկացված և ներգրավված քաղաքացիությանը՝ նաև օգնելով վերացնելու դատական համակարգի և հասարակության միջև առյա անջրպետը: Բացահայտելով խախտումները և բարեփոխումների առաջարկություններ անելով՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են փոփոխություններին ուղղված ճնշում գործադրել համակարգի վրա ՝ ապահովելով, որ արդարադատությունը ոչ միայն իրագործվի, այլև լինի տեսանելի:

Ծրագրին մասնակցել են մինչև 16 տարեկան մի քանի երիտասարդ տղաներ և աղջիկներ, որոնք մեծապես հետաքրքրված էին նախաձեռնությամբ: Շատ մասնակիցներ առաջարկեցին օրենքում փոփոխություններ կատարել՝ 14 տարեկանից ցածր երիտասարդներին թույլ տալու ազատ մտնել դատական նիստերի դահլիճ: Այս առաջարկությունն արտացոլում է երիտասարդների ցանկությունը՝ ավելի ակտիվորեն ներգրավվելու դատական գործընթացում՝ նպաստելով թափանցիկությանը և վաղ տարիքից իրավական համակարգի ավելի խորը ըմբռնմանը: Նման փոփոխությունը կարող է խրախուսել քաղաքացիական մասնակցությունը և խթանել արդարադատությանը և օրենքի գերակայությանը նվիրված, տեղեկացված, ակտիվ քաղաքացիների զարգացումը:

Այս ծրագրի ազդեցությունը ՀՀ-ի դատական համակարգի վրա կարող է խորը և երկարաժամկետ լինել: Զարգացնելով դատական գործունեությունը վերահսկելու և զեկուցելու երիտասարդների կարողությունները՝ ծրագիրը նպաստում է իրավական համակարգում բաց լինելու մշակույթի ամրապնդմանը: Քաղաքացիական հասարակության հետ շարունակական գործակցությունը ամենայն հավանականությամբ կհանգեցնի դատական համակարգում ավելի լուրջ բարեփոխումների՝ ապահովելով դատավարությունների ավելի մեծ արդարություն և հետևողականություն: Ավելին, ծրագրի կենտրոնացումը երիտասարդների զորավորման վրա կարող է խթանել երկարաժամկետ քաղաքացիական ներգրավվածությունը՝ նպաստելով, որ մասնակիցները դառնան արդարության և օրենքի գերակայության ջատագովներ իրենց համայնքներում: Այս նախաձեռնությունը կարող է նաև հիմք ստեղծել բարեփոխումների

գործընթացներում հասարակության ավելի մեծ ներգրավվածության համար և նպաստել ավելի լայն հասարակական ջանքերին՝ ուղղված ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը և ժողովրդավարական կառավարման ամրապնդմանը: